

Վերջին զանգ, վերջին դաս Բյուրեղավանի ավագ և հիմնական դպրոցներում: Այսօր Բյուրեղավանի համայնքապետարանի ներկայացուցչական կազմը այցելեց դպրոցներ, որտեղ և շնորհավորեց շրջանավարտներին և փոխանցեց համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանի շնորհավորական ուղերձը: Սամվել Վարդանյանի անվան ավագ դպրոցում կազմակերպել էին վերջին դաս: Այս տարի ավարտում է մեկ դասարան, թվով 11 շրջանավարտ: Աշակերտները բարձր տրամադրությամբ հրաժեշտ տվեցին սիրելի ուսուցիչներին, ովքեր տարիներ շարունակ կրթել ու դաստիարակել են իրենց: Տնօրեն Կարինե Խաչիկյանն իր խոսքի սկզբում հետ գնաց 12 տարի: Վերհիշեց, թե ինչպես դասվար ընկեր Ավագյանի հետ կարողացան 5 տարեկան փոքրիկներին դարձնել լիարժեք աշակերտներ. <<Սիրելիներս շնորհավորում եմ ձեզ վերջին դասի կապակցությամբ: Վստահ եմ, որ դառնալու եք լավ քաղաքացիներ: Գիտեմ, որ շատ սիրում եք դպրոցն ու ուսուցիչներին: Բարի ճանապարհ բոլորիդ>>: Հիմնական դպրոցի դահլիճը լեփլեցուն էր, ներկաների տրամադրությունը՝ տոնական: 59 աշակերտ հրաժեշտ է տալիս դպրոցին:իններորդցիները բեմից դրական լիցքեր էին փոխանցում հանդիսատեսին: Երգ, պար, հրաժեշտի խոսքեր, հետաքրքիր ու անմոռանալի ցերեկույթ: Տնօրեն Մերի Սարգսյանը միջոցառման վերջում շնորհավորեց շրջանավարտներին նշելով.<<Հավատացեք, որ այսօրը հիշարժան է մի սերնդի համար, ով լքում է տաքուկ, ապահով, միշտ ներող, սիրող, հանդիմանող, կրթող, կերտող, իրեն 9 տարի խնամքով պահած տունը՝ դպրոցը: Ձեզ բարի երթ. իմ սիրելի աշակերտներ>>: Շրջանավարտները գիտակցում էին վերջին զանգի ղողանջներով ազդարարվում է չափահասության և երիտասարդական կյանքի սկիզբը: Բարին ընդ ձեզ:

25.05.18